600.0074.18.03.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2020 թվականի №74Ա
ք. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի համաձայն՝ իրականացրել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակում կայացած 7/19 ծածկագրով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության տարածքում (Որոտան գետի ջրհավաք ավազան) ջրային ելակետային ուսումնասիրություն» գործարքի մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ նախքան մրցույթի հայտարարումը ընկերությունը չի կատարել շուկայի ուսումնասիրություն,

բ) 2020 թվականի փետրվարի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (այսուհետ՝ Լրացուցիչ պահանջներ) հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի փետրվարի 25-ի №0063_2020 գրությամբ հայտնել է, որ մրցույթից առաջ միջազգային շուկայական գների ուսումնասիրություն չի կատարվել, քանի որ համացանցում նման տեղեկատվություն առկա չէ, և միջազգային գործարար շրջանառության սովորույթների համաձայն գնառաջարկ խնդրելը համարվում է

գնանշում: Իսկ 2019 թվականի դեկտեմբերի 2-ի №0229_2019 և դեկտեմբերի 19-ի №0237_2019 գրություններով հայտնել է, որ մրցույթի ժամանակ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմվել է KFW բանկի պահանջներին համապատասխան, իսկ մրցույթի պայմաններից մեկն էլ եղել է միջազգային ծրագրերում նման ուսումնասիրություն իրականացնելու փորձը, հետևաբար Հայաստանի Հանրապետությունում իրականացված շուկայի ուսումնասիրությունը որևէ կերպ չէր կարող արտացոլել միջազգային հարթակում նման ծառայության գինը,

դ) Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի համաձայն՝ անկախ որևէ հանգամանքից, գնումների պլանի կազմման նպատակով, հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները (ոչ վաղ, քան նախորդող օրացուցային տարում իրականացված) պետք է գրանցվեն ընկերության կողմից և դառնան գնման վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լրացուցիչ պահանջների 13-րդ կետը, իսկ ներկայացրած հիմնավորումները չեն կարող հանդիսանալ խախտման օբյեկտիվ պատճառ,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
18 մարտի 2020թ.